ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No

“Հիդրոօդերևութաբանական ծառայություններ ” ծրագրի (բաժին 04, խումբ 01, դաս 01) իրականացման համար պետական բյուջեից <<Հիդրոօդերեվութաբանության եվ մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը դրամաշնորհի ձևով դրամական հատկացման մասին

‘30’ հունվարի 2020թ. **ք. Երևան**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և <<Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Դպիրյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1 1919-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), "Հիդրոօդերևութաբանական ծառայություններ" ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. մայիսի 3-ի N 537-Ն որոշմամբ հաստատված «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018-2020 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների ծրագրի» շրջանակներում 2020թ. աշխատանքների կատարման համար, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Նախարարությունը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված 1 313 140 500 (մեկ միլիարդ երեք հարյուր տասներեք միլիոն հարյուր քառասուն հազար հինգ հարյուր) դրամը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված, ՀՀ Կառավարության 2018 թվականի մայիսի 3-ի N 537-Ն որոշմամբ հաստատված «Հիդրոօդերևութաբանության եվ մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018-2020 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների ծրագրի" սահմաններում, կազմակերպության կողմից 2020թ. իրականացվելիք հիդրոօդերևութաբանական միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ)՝ ներկայացված են սույն պայմանագրի կից N 1 հավելվածում:

1.3. Աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է 2020 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1 Օգտագործել միջոցառումների իրականացումից ստացված արդյունքները,

2.1.2 Ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.3 Կազմակերպությունից պարբերաբար պահանջելու և ստանալու տեղեկատվություն սույն Պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.4 Իր իրավասությունների սահմաններում կասեցնել Կազմակերպության կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարվող աշխատանքները,

2.1.5 Վերահսկելու Կազմակերպությանը հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը,

2.1.6 Կազմակերպությունից պահանջելու իրականացնել սույն պայմանագրով նախատեսված միջոցառումները:

2.2. Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1 անհրաժեշտության դեպքում աջակցել Կազմակերպությանը ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացնելու,

2.2.2 ընդունել իրականացված միջոցառումների արդյունքները, կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ,

2.2 3 Կազմակերպությանը հատկացնել վերջինիս տրամադրման ենթակա դրամաշնորհի գումարը՝ համաձայն N 2 հավելվածի (ըստ վճարման ժամանակացույցի):

2.3. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.3.1 իրականացված միջոցառման արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք, սույն պայմանագրի 4.1 և 4.2 կետերով նախատեսված չափով և կարգով տրամադրման ենթակա դրամաշնորհի գումարը,

2.3.2. Նախարարության կողմից սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում՝ պահանջելու հատկացնել մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք դրամաշնորհի գումարը,

2.3.3 Նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 իրականացնել ծրագրի շրջանակներում Նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.2 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և կամ սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.3 կատարել Նախարարության բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով Նախարարություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն:

2.4.5 միջոցառումների իրականացման արդյունքում սույն պայմանագրով հատկացված գումարից մինչև տարեվերջ տնտեսված ֆինանսական միջոցները, այդ թվում ԱԱՀ գծով չօգտագործած գումարները 2020թ. բյուջետային տարվա վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ որպես 2020թ. բյուջետային տարում չօգտագործված միջոցներ:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Ֆինանսական հատկացումների չափը և կարգը

4.1 Աշխատանքների իրականացման համար դրամաշնորհի տրամադրումն ըստ <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի և Պայմանագրին կից նախահաշվի կազմում է ընդամենը 1 313 140 500 (մեկ միլիարդ երեք հարյուր տասներեք միլիոն հարյուր քառասուն հազար հինգ հարյուր) դրամ:

4.2 Կազմակերպության կողմից Աշխատանքներն իրականացվում են հաշվետու տարվա ընթացքում, իսկ վճարումներն իրականացվում են ամսական՝ կանխավճարային ձևով, յուրաքանչյուր ամսվա առաջին տաս աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ 2020 թվականի հունվար և դեկտեմբեր ամիսների՝ հատկացվելիք գումարը տրամադրվում է համապատասխանաբար փետրվարի առաջին տաս աշխատանքային օրվա և մինչև դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, տարածվում է 2020թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, գործում է մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.3. Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող	Պատվիրատու
"Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն " ՊՈԱԿ գտնվելու վայրը Դավիթաշեն 4-րդ թաղամաս Ա.Միկոյան փող. 109/8 (3-րդ մասնաշենք) հհ __900018003815 հվհհ – 02565542	Արտակարգ իրավիճակների նախարարություն գտնվելու վայրը Դավիթաշեն 4-րդ թաղամաս Ա.Միկոյան փող. 109/8 հհ 900011001360 հվհհ 00153247
---------- Վ.Օհանյան ստորագրություն Կ.Տ.	---------- Ա.Դպիրյան ստորագրություն Կ.Տ.